ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

Մանկապարտեզների կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/40» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

15.01.2019թ.
Ժամը՝ 11:30

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Թումանյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Բաղդասարովա, Ն. Եղոյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացության և առաջին տեղ զբաղեցնող մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի մասին

(Մ. Թումանյան)

1. Ընդունել ի գիտություն որ.

1.1 «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների և «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի մասնակիցները հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունեն ժամկետանց հարկային պարտավորություն և «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը համապատասխանում է հրավերով նախատեսված պահանջներին:

1.2 Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցնող ճանաչված մասնակիցների կողմից էլեկտրոնային աճուրդ համակարգի միջոցով հրավերով սահմանված ժամկետում ներկայացվել է որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով սահմանված փաստաթղթերը և իրենց կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը՝ համաձայն հրավերի հավելվածի 3-ի:

1.3 Մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես.

-«Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված նախկինում կատարված պայմանագրի գումարը չի համապատասխանում պայմանագրի հաշիվ-ապրանքագրերի հանրագումարին /հաշիվ-ապրանքագրերի հանրագումարը գերազանցում է պայմանագրային գումարը/,

-«Ցիկլոիդ» ՍՊԸ-ի կողմից 5-րդ չափաբաժնի մասով ներկայացված տեխնիկական բնութագրում նշված ապրանքի մեկ հատի քաշը չի համապատասխանում հրավերով սահմանվածին, հաշվի առնելով, որ հրավերի բնութագրում նշված քաշը մեկ երեխային բաժին ընկնող չափն է:

1.4 Գնահատող հանձնաժողովը որոշեց, նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և ծանուցել մասնակիցներին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկվել արձանագրված անհամապատասխանությունները: Մասնակիցների կողմից սահմանված ժամկետում /մեկ աշխատանքային օր/ 1.3 կետում նշված անհամապատասխանություններն ուղղելու դեպքում ներկայացված հայտերը կգնահատվել բավարար, հակառակ դեպքում կգնահատվեն անբավարար և կմերժվեն:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3 դեմ - 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

(Մ. Թումանյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2019 թվականի հունվարի 17-ին ժամը 11:00-ին, Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում, հասցե՝ ք. Երևան, Արգիշտի փողոց 1:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ..... Մ. Թումանյան

Անդամներ՝ ..... Ա.Բաղդասարովա

..... Ն.Եղոյան

Քարտուղար՝ ..... Ա. Համբարձումյան